

ԱՆԳՂԻԱԿԱՆ ՊԱՇ ՏՕՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Կլէտսդըն միարան հաւանութեամբ ազգին, գլուխ է անգղիական նոր պաշտօնարանին, ինքն նախ մտածելով իւր ութսունամեայ հասակը՝ չէր ուզեր յանձն առնուլ այսպիսի ծանրութիւն մը. նոյն իսկ Թադուհին անձնական հաճութեամբ կ'ուզէր աւելի լոյս Հարդինկընը կամ լոյս Կրէնփիլը, սակայն այս երկու սրատես անձինքն իմացուցին Թադուհայնն և Կլէտսդընի որ անուն մը միայն ընտրած էր ազգն յայս գլխաւորութիւն:

Մենք հօս համառօտիւ կը դնենք անգղիական պաշտօնարանին կարգաւորութիւնն, որ շատ տարբեր է ուրիշ ազգաց գործածած կերպէն:

Անգղիական պաշտօնարան մը կը բաղկանայ 17 անդամներէ:

Առաջին լոյս գանձապետութեան, որ կը կոչուի նաև սոսկ՝ Առաջին, ասիկայ է գլուխ Խորհրդարանին:

Քարտադար աշխատակաւ պաշտօնավարութեան (échiquier), որ կը հսկէ առևտրից վրայ, որուն յանձնուած է ելևմտից և առևտրական վարչականութեան կշիռքն:

Գանձապետութեան առաջին լոյսն երկայն ժամանակ վրակեցու եղաւ նաև ծախուց կարգաւորութեան. քարտուղարն և համարական (controller) կը ճշդէին հաշուոց Ատենին (Corte) մէջ ծախուց օրինաւորութիւնը, և վճարմունքն կը հատուցանէին: Բայց ետքն այս երկու տիտղոսներն ալ մէկ անձի կը պատկանէին. և երբոր բաժնուեցան անուններն, որոշուեցաւ որ Գանձապետութեան առաջին լոյսին յանձնուին բոլոր քաղաքական գործերն, և քարտուղար կոչուած ին՝ առևտրական մասն:

Կլէտսդըն ունի այս երկու պաշտօններն ալ. վասն զի կրնայ, ըստ անգղիական կարգաց և սովորութեանց վարել թէ պաշտօնարանին ուղղու-

թիւնը և միանգամայն Հասարակութեան Սենեկին մէջ՝ առանձին կողման մը թերակցութիւնը:

Գրագիրն Պետութեան արտաքին գործոց, որ կ'ըսուի նաև՝ Գլուխ արտաքին գործավարութեան (foreign Office), է պաշտօնեայ արտաքին գործոց: Յայս պաշտօն կոչուած է լոյս Կրէնփիլ, զոր արդէն ունէր վերջին ազատական պաշտօնարանին ժամանակ, և որ հնարեց այն քաղաքականութիւնն՝ որ կոչուի Գերիխանակաւ ակտիւութիւն (masterly inactivity), իրաւունքն է, ինքն արգիլեց որ չմիջամտի Անգղիա ի ճակատամարտն փռանկբրուսիական (1870-71), և միայն ծանուց՝ որ եթէ պատերազմող տէրութիւնքն ուզենան ֆուսել Պենթիոյ չէ. զորութեան՝ անգղիական զունդքն պիտի անցնին ի պաշտպանութիւն այն փոքրիկ աշխարհին: Դարձեալ Պետութեան գրագիր տիտղոսն կը կրեն պաշտօնեայք ներքին և արտաքին գործոց, գաղաքականութեան, պատերազմաց և Հնդկաստանի:

Հարդինկընի մարզիղն, որ 1874 տարինէն մնացած էր իբրև գլխաւոր ազատականաց Հասարակութեան Խորհրդարանին մէջ, պաշտօնեայ է Հընդկաց: Հին Սենեկին մէջ էր գրագիր ի գլուխ իռլանտիոյ:

Կարգաւորութիւնն պատարազմաց յանձնուած է Չիլլըրսին, որ էր առաջ քարտուղար Լէնչեսդրիի դքսութեան և ընդհանուր պարտաւճարն: Ինքն զինուոր չէ. վասն զի Անգղիոյ մէջ կարևոր չհամարուիր զինուոր ըլլալ պատերազմի մատակարարութեան պաշտօնն վարելու համար:

Գաղթականութեանց կարգաւորութեան գլուխք են Քրմպլընդ կոմսն, և ներքին պաշտօնեայն սըր Կիլկլ. Հարքուր՝ որ ազատականութեան կող-

ման ժողովրդական անդամ մ'էր և քաջ պերճախօս :

Առաջին յորտ Տուրակալութեան, պաշտօնեայ ծովային ուսման . որ, յանձնուած է Նորթպրոք կոմսին, հին փոխարքային Հնդկաց :

Քրապիր գլխաւոր իշխանտիոյ կը կոչուի իւրանտական գործոց պաշտօնեայն . և է Ֆորսդըր, չափաւոր ազաւտականաց գլուխն, հին փոխանախադահն հասարակաց հրահանգութեան մարդին :

Լորտ Բարտոլոմայուն կամ մեծ քարտուղարն, է մեծ դատաւոր՝ գլուխ դատաստանական անդամակցութեանց Մեծին բրիտանիոյ, և առաջին դատաւոր՝ Բարտոլոմայութեան առեւեկին . ինքն է նախագահ լորտերու խորհրդաւանին . յայտ պաշտօն կոչուած է լորտ Սէլպոուն, զոր արդէն ունէր նախնութեաց ազատական Պաշտօնարանին մէջ :

Լորտ նախագահ առանձնական խորհրդեան, և յորտ 'ի վերայ կը քոյ, են պաշտօնեայք առանց գործակալութեան : Շատ տարի կայ, որ կ'ուզեն վերջընել այս տիտղոսներն : Առանձնական խորհրդեան գլուխ եղաւ Սփինսէր կոմս, և կը քաւաւ յորտն՝ Արմիլի դուքսն, որ մեծ ուժ ունի լորտերուն Սենեկին ազատական մասին վրայ : Յիշենք նաեւ՝ որ փոխանախագահ առանձնական խորհրդեան է՝ Մոնտելլա, ծննդեամբ կոմսակայի :

Տըստն է նախագահ ընկերակցութեան տեղական վարչութեան . Գիշտարի առաջ՝ այս պաշտօնեայն կ'առնուուէր « նախագահ աղբատաց հանգանակութեան » : Իսկ հիմայ՝ բաց 'ի նոյն պաշտօններէն՝ ունի նաև առողջային օրինաց գործադրութիւնն, ժողովրդեան ազգահամարն, քաղաքատեսչական հսկողութիւնն, բաղանիքն, և գործաւորական շինուածներն, և այլն :

Սենեկին պաշտօնէից մէջ կան նաև ստոնք . ընդհանուր գլխաւորն թղթատանց (կոյրն Յոուսէթ), և վաճառականութեան պաշտօնարանին նախա-

գահն (նոր ընտրութիւն Տիգրայելի պաշտօնարանին) : Այս վերջին տեղն գրաւեց Յովս . Չէմպրին, որ ազատականաց զարգացեալ խմբէն է, ինչպէս Պրայդ-ևսըր Չարլս Տիլք արտաքին գործոց ենթագրաւիր : Ասոնք երեք արմատականք են՝ զորս ընդունած է Կլէտսդըն յիւր խորհրդարանն :

Քարտուղարն Լէնչլոպրի դքսութեան համար (որուն ընտրուեցաւ արմատականն ճոն Պրայդ), մասն չունի խորհրդարանին : Այս տեսակ են նաև Գլուխ Պալատանն, մեծ սենեկապանն, մեծ մարալախան Պալատան, մեծ աւապարտկիրն, հրամանատարն բանակաց, մեծ գործառու շինուածոց և աշխատութեանց, ընդհանուր փաստաբանն, ընդհանուր հոգաբարձուն, և այլն :

Պաշտօնարանին հետ մէկտեղ կը փոխուին նաև փոխարքայն Հնդկաստանի՝ որ է հիմայ Ռիփին մարգիզն, իոլանտիոյ փոխարքայն, Գանատայի փոխարքայն, բոլոր թագուհւոյն մօտ եղած անձինքն և գլխաւոր դեսպաններն :

Վերջապէս, առաջին պաշտօնեայն կը կարգադրէ իննսուն և երկու մեծամեծ պաշտօններ : Նախ և առաջ տասնէկորս պաշտօնարանք և ենթագրական գլուխներ, որոց շահքն են 4000 ստեռլինէն սկսեալ (որ կ'ընէ 400,000 ֆր.) մինչև 20,000 (կէս միլիոն տարին, և ոսկի!) : Կոն դարձեալ 35 զօրագլխական գործեր, որոնք պարտին վճարել իրենց պաշտօնէից հազար ստեռլինէն մինչև 25,000 ստեռլին տարին . և վերջապէս, 43 երկրորդական պաշտօններ, ուր ոչ ոք նուազ քան զհազար ստեռլին կ'առնու տարին : Այս 92 բարձր պաշտօնակալը կը բաժնեն մէջերնին չափաւոր գումար մը տարեկան՝ 168,966 լիրա ստեռլին, որ կ'ըլլայ 4 միլիոն և 224,150 ֆունդ :

Կլէտսդըն կրնայ գոհ ընել իրեն կողմնակցաց բաղմութիւն մը բաց 'ի բոլոր բնակաց Միացեալ-Պետութեան և Հնդկաց թագաւորութեան :